



**Ժամանակակից ընկալումները ժողովրդավարության, մարդու իրավունքների ու անվտանգության հարաբերակցության մասին հետպատերազմյան Հայաստանում: ԾՂմարիտ, թե՛ կեղծ**

### **Փետրվար 11**

#### ***Համառոտագրություն ու եզրակացություններ***

Միջոցառումը սկսվեց Freedom House-ի Եվրոպայի ու Եվրասիայի ծրագրերի ղեկավար **Մարկ Բեիրենդտի** բացման խոսքով, որից հետո հայաստանյան ծրագրի համակարգող **Մոսի Թաթևկյանը** համառոտ ներկայացրեց Freedom House-ի ծրագիրն ու քննարկման թեման:

Բացման խոսքում Մարկ Բեիրենդտը ընդգծեց Freedom House-ի երեք տարբեր մասերի գործակցության կարևորությունը, այն է՝ արտակարգ իրավիճակներում աջակցություն իրենց աշխատանքի արդյունքում թիրախավորված կամ վտանգի մեջ գտնվող ակտիվիստներին, լրագրողներին և իրավապաշտպաններին, Freedom House-ի առանցքային զեկույցներն ու խորացված հարաբերություններն ու երկարաժամկետ համագործակցությունը տարբեր երկրների գործընկերների հետ ժողովրդավարության ու մարդու իրավունքների զարգացմանը նպաստող աշխատանքի միջոցով: Freedom House-ը օգնում է իրավապաշտպաններին ու քաղաքացիական շարժումներին առաջնորդությունն իրենց ձեռքը վերցնել, նույնականացնել տվյալ հասարակության համար ամենակարևոր խնդիրներն ու այնքան առաջընթաց ունենալ, ինչքան հնարավոր է: Չեկույցներն ու ուսումնասիրություններն իրավագործում են Freedom House-ին հաղորդակցվել կառավարությունների ու քաղաքականություն մշակողների հետ: Այս երեք թևերի միասնությունը Freedom House-ի դերը դարձնում է յուրահատուկ: Մարկ Բեիրենդտը նաև անդրադարձավ պատերազմի ու կովիդ-19ի հետևանքով ապատեղեկատվության ազդեցությանը հայկական տիրույթում: Նա նշեց, որ ուսումնասիրությունների արդյունքում Freedom House-ը հասկացել է, որ այժմ Հայաստանում անվտանգությունն ու ժողովրդավարությունը միմյանց հակադրելու միտում կա, ինչը հիմք է ստեղծում ապատեղեկատվության տարածման համար: Անվտանգությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, խոսքի ազատությունն ու իրավունքի գերակայությունը միմյանց հետ փոխկապակցված են: Չկա անվտանգություն առանց կանխատեսելի կառավարման, չկա իրավունքի գերակայություն առանց փոքրամասնությունների իրավունքների ու տարբեր կարծիքների պաշտպանության: Մարկ Բեիրենդտը ավարտեց իր խոսքը նշելով, որ ժողովրդավարությունը անվտանգության հիմնաքարն է, և սա Freedom House-ի կարևորագույն սկզբունքներից է: Այս գաղափարը շատ ընդդիմախոսներ ունի, ովքեր փորձում են անվտանգությունը ներկայացնել որպես այլընտրանք ժողովրդավարությանը: Մենք աշխատում ենք այս միջերդ վերացնելու ուղղությամբ այնպիսի միջոցներով, որոնք կիրառելի կլինեն յուրաքանչյուր անհատական երկրի համատեքստում:

**Մոսի Թաթևկյանը** նշեց, որ Հայաստանում Freedom House-ի ծրագիրը միտված է ապատեղեկատվության տարածման դեմ պայքարի միջոցով ժողովրդավարությունը զարգացնելուն: Ծրագիրը կազմվել է համավարակից ու պատերազմից առաջ, որոնք ավելի խորացրին հայ հասարակության մեջ առկա խնդիրները: Ապատեղեկատվության դեմ պայքարը

շատ բաղկացուցիչներ ունի, ու այժմ բազմաթիվ կազմակերպություններ ունեն ծրագրեր, որոնք աշխատում են մեդիագրագիտության, տեղեկատվական անվտանգության ու այլ ոլորտներում: Freedom House-ը մեծամասամբ աշխատում է ապատեղեկատվության միջոցով ստեղծված կեղծ պատմությունների ու դրա հետևանքով հասարակության բևեռայնացումը նվազեցնելու ուղղությամբ, հատկապես այն խնդիրների շուրջ, որոնք ապատեղեկատվության հետևանքով առաջացել են ժողովրդավարության ու մարդու իրավունքների համար: Ծրագիրը միտված է նպաստել քաղիասարակության տարբեր խմբերի, մեդիա կազմակերպությունների ու հանրության միջև կոալիցիաների ձևավորմանը՝ ապատեղեկատվության դեմ պայքարում ավելի ճկուն լինելու նպատակով, ինչպես նաև համագործակցելով օրենսդիր ու գործադիր մարմինների հետ՝ զարգացնելու ռազմավարական հաղորդակցություններ՝ ապատեղեկատվության տարածումը կանխելու համար: Freedom House-ը մտադիր է կազմակերպել նաև հանրային ու «Chatham House» ձևաչափերով քննարկումներ ԶԳԿ-ների, մեդիա կազմակերպությունների, անկախ վերահսկողական մարմինների, օրենսդիր ու գործադիր մարմինների ներկայացուցիչների, անհատ փորձագետների ու տեսաբանների մասնակցությամբ: Սա առաջին քննարկումն է մարդու իրավունքների, ժողովրդավարության ու անվտանգության փոխհարաբերակցության մասին: Ինչպես նշեց Սոսի Թաթևյանը, Հայաստանում առկա է այն տեսակետը, որ մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունն արևմտյան, ազատական, գլոբալիստական ու կեղծ արժեքներ են ներմուծված դրսից՝ միտված թուլացնելու հանրությանը: Որոշ անհատներ ու խմբեր վստահ են, որ Հայաստանը պարտվեց պատերազմում, որովհետև առաջնայնություն դարձրեց քաղիասարակության կողմից խթանվող ժողովրդավարությունը, որդեգրեց այնպիսի արժեքներ ու սկզբունքներ, որոնք թուլացրին իմունիտետը, երկրի պաշտպանությունն ու անվտանգությունը: Այնուամենայնիվ, չի կարող լինել անվտանգություն առանց մարդու իրավունքների ու իրական ժողովրդավարության, որը կապահովի որակյալ կառավարումը բոլոր, այդ թվում՝ անվտանգության ու պաշտպանության ոլորտներում: Ինչպես նշել է ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը, մարդու իրավունքները, զարգացումն ու անվտանգությունը միմյանց հետ ուղղակիորեն փոխկապակցված են:

Առցանց քննարկումն այնուհետև շարունակվեց երկու թեմատիկ ելույթներով: Նախ ելույթ ունեցավ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան **Արման Թաթևյանը** «Մարդու իրավունքների, իրավունքի գերակայության ու անվտանգության փոխհարաբերակցությունը Հայաստանում» թեմայով: Պարոն Թաթևյանը իր ելույթը սկսեց Հայաստանում ժողովրդավարությունը, մարդու իրավունքներն ու անվտանգությունն միմյանց հակադրելու վտանգներին անդրադառնալով: Նա ընդգծեց, որ այս արժեքները ոչ միայն չեն հակասում, այլև փոխլրացնում են իրար, ու ճգնաժամից միակ ելքը ժողովրդավարությամբ ու մարդու իրավունքներով առաջնորդվելը կլինի: Միայն մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների միջոցով է հնարավոր կառավարության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնել, երաշխավորել, որ պետությունը կկատարի իր պարտավորությունները: Սա վերաբերում է նաև միջազգային կազմակերպություններին ու նրանց ժամանակին արձագանքին: Արման Թաթևյանը ցավով նշեց, որ բռնապետական կառավարություններն այժմ ամրապնդում են իրենց դիրքերն աշխարհում: Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմը ցույց տվեց, որ բռնապետական կառավարությունները միտված են հակամարտություններն ու խնդիրները լուծելու ոչ թե միջազգային կառույցների միջնորդությամբ, այլ քաղաքական ու ռազմական ուժի միջոցով: Նա ներկայացրեց նաև միջազգային մարդասիրական ու մարդու իրավունքների խախտումները, որոնք տեղի են ունեցել Լեռնային Ղարաբաղում պատերազմի ընթացքում, ներառյալ զինվորականների ու քաղաքացիական անձանց գլխատումներն ու մարմնական խեղդումները, արգելված զինատեսակների կիրառումը, ռազմագերիների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքն ու աղբբեջանական դեկավարության կողմից հայերի նկատմամբ իրականացվող ռասիզմի և էթնիկ ատելության քաղաքականությունը: Նա նշեց, որ բազմաթիվ նամակներ ու հոլովակներ է ուղարկել մարդու իրավունքների միջազգային մարմիններին՝ կապված մարդու իրավունքների խախտումների հետ, սակայն չնայած այն խոստմանը, որ «ոչ ոք անտեսված չպիտի մնա», որը վերաբերում է նաև չճանաչված պետություններին, բախվել է առաքելությունների,

արձագանքի ու պատասխանների բացակայությանը՝ տեսնելու խնդիրները Հայաստանում ու դրա շուրջ, օրինակ խնդիրները սահմանային շրջաններում:

Խոսելով ՀՀ սահմանների շուրջ ադրբեջանական ուժերի տեղակայման մասին, Արման Թաթոյանը խոսեց դրա ոչ իրավական լինելու մասին, քանի որ այն խախտում է մարդու իրավունքները, ներառյալ սահմանակից գյուղերում ապրողների սեփականության, անվտանգության, երեխաների իրավունքները և այլն: Միջազգային իրավունքի մարդակենտրոնության տրամաբանությունը պետք է կիրառվի որպես ժողովրդավարության հիմնաքար: Միջազգային մարդու իրավունքների մարմինների պասիվ դիրքորոշումը վարկաբեկում ու թուլացնում է հավատն ու հարգանքը մարդու իրավունքների ու ժողովրդավարության միջազգային համակարգի նկատմամբ: Նա նաև նշեց, որ արտակարգ ու ռազմական դրությունները կառավարությունների համար հնարավորություններ են ստեղծում դրանք օգտագործել իրենց քաղաքական օրակարգն առաջ տանելու համար: Թաթոյանը կարևորեց ժողովրդավար պետության դրական պարտականությունը՝ հիմնելու արդյունավետ հանրային հաղորդակցություն և պատեղելի կառավարության համար ազատ տարածք չթողնելու նպատակով: Թաթոյանը կարծում է, որ մարդու իրավունքների ամենկարևոր խնդիրներն այժմ անտեսված են, ու հիմնական կռվախնձորը իշխանությունն է: Նա վերջացրեց իր խոսքը նշելով, որ այս քննարկումը հատկապես նշանակալի է հասկանալու համար, որ մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը շատ կարևոր են անվտանգության համար:

Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Ռիչարդ Կիրակոսյանը** ներկայացրեց իր ելույթը «Հետհեղափոխական մեղրամսի ավարտը» խորագրով: 2018 թվականին Թավշյա, ոչ բռնի հեղափոխության տպավորիչ հաղթանակից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը դժվարանում է պահպանել ժողովրդավարացման ակնթարթը: Չնայած 2018 թվականի ղեկտեմբերին Հայաստանի համար հազվադեպ ազատ ու արդար ընտրություններում ունեցած միանշանակ հաղթանակին ու բարձր լեգիտիմությանը՝ Հայաստանի կառավարությունը վերջերս սկսել է սայթաքել՝ քաղաքական սխալ քայլեր ու սխալ քաղաքականություն վարելով: Հայաստանում այժմ ուրիշ քաղաքական իրականություն է, քանի որ 2020 թվականի սեպտեմբերին սկսված 44-օրյա պատերազմը անսպասելիորեն ավարտեց Հայաստանի «հետհեղափոխական մեղրամիսը»: Հայկական ժողովրդավարությունը նաև պատերազմից առաջ հանդիպեց մի շարք խոչընդոտների, ինչպիսին էր 2020 թվականի մարտից սկսած պայքարը կորոնավիրուսի համաճարակի դեմ, որը արդեն իսկ լարվածության մեջ էր պահում ինչպես պետության հնարավորությունները, այնպես էլ թուլացրել էր վստահությունը պետության հանդեպ, որը անվտանգության անվան տակ փորձում էր միջոցներ ձեռնարկել վտանգավոր կերպով սահմանափակելու քաղաքացիական ազատությունները, ներառյալ մամուլի որոշ ազատություններ: Մեկ այլ նախապատերազմյա մարտահրավեր էր նաև Հայաստանում ժողովրդավարության կառուցվածքի թերություններն ու անբավարարությունը: Բախվելով ավտորիտար կառավարման ժառանգությանն ու արմատավորված կոռուպցիային՝ 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը չկարողացավ պատշաճ կերպով զորեղացնել ժողովրդավարական ինստիտուտները՝ անտեղի գերվստահություն ունենալով անհատների հզորացման վրա: Չսպումների ու հակակշիռների համակարգի բացակայությունը խեղաթուրել է ինստիտուցիոնալ ժողովրդավարության զարգացումը և առաջ բերել կառավարման ավելի ոչ ֆորմալ համակարգ՝ հիմնված վարչապետի պաշտոնում իշխանության գերկենտրոնացման վրա: Ըստ Կիրակոսյանի, Հայաստանի «թավշյա հեղափոխության մեղրամսի» առավել զարմանալի թերություններից մեկը կառավարման և բարեփոխումների որևէ հստակ կամ համապատասխան ռազմավարական տեսլականի բացակայությունն է: Ռազմավարական տեսլականի բացակայությունը շարունակվում է, և հստակ ուղղության բացակայությունը այժմ առավել ակնհայտ է քաղաքականության մի շարք ոլորտներում, ինչպիսիք են անվտանգության և պաշտպանության բարեփոխումները:

Կիրակոսյանը սահմանեց երկու ավելի լայն միտումներ, որոնք խոչընդոտում են հայկական ժողովրդավարությունը: Այս միտումներից առաջինը այն վտանգավոր նախադեպն է, որ Ղարաբաղի համար վերջին պատերազմը արդարացրեց ուժի օգտագործումը որպես քաղաքական հակամարտությունների լուծման ընդունելի միջոց: Երկրորդ վտանգավոր միտումն

արմատավորված է այն նախադեպի մեջ, որ երկու շատ ավելի մեծ, ավելի հզոր ավտորիտար երկրների (Ադրբեջան և Թուրքիա) կողմից փոքր ժողովրդավարության նկատմամբ ռազմական հաղթանակն ակնհայտ ընդունվեց: Նա եզրակացրեց, որ բարեփոխումներից և ժողովրդավարությունից հետընթացի և նահանջի վտանգը ոչ միայն առանձնանում է որպես վտանգ Հայաստանի համար, այլև սպառնալիք է միջազգային հանրության համար: Հայաստանի ապագայի համար ժողովրդավարության պաշտպանությունն այժմ նույնքան կարևոր է, որքան ժողովրդավարության խթանումը:

Երկու թեմատիկ ելույթներից հետո առցանց քննարկումն այնուհետև ընթացավ հինգ բանախոսների մասնակցությամբ, և այն վարում էր Սոսի Թաթիկյանը:

Հայաստանի Հանրային խորհրդի նախագահ, Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի հիմնադիր և ղեկավար **Ստյոպա Սաֆարյանը** նշեց, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանում ժողովրդավարությունը վտանգված էր այն ընկալման պատճառով, որ քանի որ երկիրը չկարգավորված հակամարտության ու պատերազմի սպառնալիքի տակ էր, լիարժեք ժողովրդավարության կարիքը չկար: 2018 թվականի թավշյա հեղափոխությունը հնարավորություն էր պարզաբանելու և հաստատելու, որ Հայաստանը կարող է ունենալ կատարյալ անվտանգություն միայն ժողովրդավարության պայմաններում: Այնուամենայնիվ, ժողովրդավարությունը բավարար չափով չպաշտպանվեց, իշխանությունները չստեղծեցին ուժեղ համակարգային մեխանիզմներ, չապահովեցին տեղեկատվական անվտանգություն, հանրային կապ և լրատվամիջոցների կարգավորում: Ժողովրդավարական հեղափոխությունն իր հաղթանակից ի վեր դարձավ թիրախ հակաժողովրդավարական ուժերի համար: ԵՄ-ի հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթները պարունակում են մի շարք հռչակագրային դրույթներ և ԵՄ պարտավորություններ՝ ահաբեկչության դեմ համատեղ պայքարի վերաբերյալ, որոնք ներառված չեն Հայաստանի անվտանգության համակարգում:

Իր խոսքում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ **Արթուր Սաքունցը** նշեց, որ Հայաստանում անվտանգությունը երբևէ չի ձևավորվել ու հիմնվել ժողովրդավարական սկզբունքների ու արժեքների վրա: Հայաստանը չի կարողացել ձևավորել ժողովրդավարական ինստիտուտներ ու մշակույթ, փոխարենը մենք հետխորհրդային ժամանակներում մեր խնդիրները փորձել ենք լուծել խորհրդային մեխանիզմներով: Հեղափոխությունից հետո ներկա իշխանությունները չհաջողեցին մարդու իրավունքների ու ժողովրդավարության ոգով ամբողջապես վերակազմակերպել պետական համակարգն ու ինստիտուտները: Ռուսաստանում ժողովրդավարության հետ կապված խնդիրներն ու այն փաստը, որ Ռուսաստանը հանդիսանում է ՀՀ անվտանգության հիմնական երաշխավորը, բացասական ազդեցություն են ունենում ժողովրդավարության վրա Հայաստանում: Թավշյա հեղափոխության ընթացքում ՀՀ քաղաքացիները ժողովրդավար ու իրավական պետության պահանջ ու դիմում ներկայացրեցին, բայց ներկա իշխանությունը սպառեց իր բարձր լեգիտիմությունն ու ժողովրդի վստահությունը ոչ պատշաճ կառավարում իրականացնելու պատճառով: Հասարակական կազմակերպությունների ու մասնավորապես Բաց հասարակությունների հիմնադրամի նկատմամբ իրականացվող հարձակումներին կառավարության ոչ պատշաճ արձագանքներն իրենց բացասական հետևանքն ունեցան ժողովրդավարության վրա: Լեռնային Ղարաբաղի պատերազմում ավտորիտար պետությունները պարտության մատնեցին ժողովրդավարական ճանապարհ ընտրած Հայաստանին, բայց միջազգային գործընկերները սկզբունքային մոտեցում չցուցաբերեցին ու անպատժելիության պատճառ դարձան Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից թույլ տրված մարդու իրավունքների խախտումների նկատմամբ, որը բարդացրեց ժողովրդավարության ջատագով քաղիասարակության աշխատանքը ՀՀ-ում: Այժմ Հայաստանն ակնկալում է միջազգային կազմակերպությունների արձագանքը հայ ռազմագերիների վերադարձի համար:

Խաղաղության երկխոսություն ԶԿ-ի հիմնադիր-նախագահ **Էդգար Խաչատրյան**ն իր խոսքում նշեց, որ մարդու իրավունքների ու անվտանգության հակադրությունը նոր ու հայկական ֆենոմեն չէ, դրա արմատները դեռ խորհրդային ժամանակներից են, և այժմ այդ նույն քաղաքականությունը թելադրվում է Ռուսաստանի կողմից: Հավանաբար սրա պատճառն այն է, որ նոր իշխանությունները չհետազոտեցին ու քաղաքական գնահատական չտվեցին անցյալին: Նոր իշխանությունները ոչ միայն դասեր չքաղեցին անցյալից, այլ շարունակեցին գործել նախահեղափոխական տրամաբանության շրջանակներում: Երբ պետական ինստիտուտները չեն կարողանում ապահովել քաղաքացու իրավունքներն ու անվտանգությունը, դրանից օգտվում են կեղծ լուրեր ու ապատեղեկատվություն տարածողները: Մարդու իրավունքների ու ժողովրդավարության հիմքերը խարխլվեցին պատերազմի ժամանակ՝ հանգեցնելով իրավիճակի, երբ շատերի համար անվտանգությունն ապահովողը Ռուսաստանն է, ու մեր ճակատագիրն է ապրել ներկա աշխարհաքաղաքական պայմաններում: Այժմ մարդու իրավունքներն ու ժողովրդավարական ինստիտուտներն անառողջ վիճակում են: Ներկա քաղաքականության փոփոխության համար անհրաժեշտ է մարդու իրավունքների զարգացում ու քաղաքացիների գորեղացում:

Լրագրողներ հանուն մարդու իրավունքների ԶԿ-ի նախագահ **Ժաննա Ալեքսանյան**ը նշեց, որ պատերազմից ամիսներ անց Հայաստանի խնդիրները մնում են չլուծված, բնակչության շրջանում տարածված է Հայաստանի մեկուսացման ու անձնական անպաշտպանության զգացումը: Իրավապաշտպանները թիրախավորվում են նախկին իշխանությունների կողմից, իսկ հասարակությունը բևեռացված է: Մարդու իրավունքների խախտումների ու բանակում կոռուպցիայի մասին բարձրաձայնող քաղհասարակության անդամներն ու իրավապաշտպանները հարձակումների էին ենթարկվում, որպես վտանգ ազգային անվտանգությանը, բայց հենց այդ խնդիրներն են, որ պարտության պատճառ դարձան ու դրանք չպետք է թաքցվեն ու անտեսվեն:

Քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնից **Արմեն Գրիգորյան**ը նույնպես նշեց, որ անվտանգության և ժողովրդավարության միջև հակասությունը Հայաստանում վաղուց գոյություն ունի: Քաղաքացիական հասարակությանը ասվել էր, որ որոշ խնդիրների բարձրաձայնումը կվտանգեր ազգային անվտանգությանը: Հայաստանում մշտապես առկա գոյատևման խնդիրը ու կարճաժամկետ խնդիրները բացասաբար են ազդում ժողովրդավարական զարգացումների վրա: Իշխող ուժը ակտիվորեն գործունեություն ծավալելու և նախաձեռնություններ ձեռնարկելու փոխարեն ընդամենը արձագանքում է ժողովրդավարության հակառակորդների կողմից իրականացվող քարոզչությանը:

### **Եզրակացություններ**

Գոյություն ունեն տարբեր հակասական պատմություններ և ապատեղեկատվություն մարդու իրավունքների, ժողովրդավարության և անվտանգության փոխկապակցվածության վերաբերյալ: Դրանք բևեռացնում են հասարակությանը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում, հատկապես հետխորհրդային տարածքում:

Մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղի պատերազմում միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների խախտումների նկատմամբ պասիվ դիրքորոշումը վարկաբեկում և թուլացնում է մարդու իրավունքների և ժողովրդավարության միջազգային համակարգի նկատմամբ հավատն ու հարգանքը: Չնայած «ոչ ոքի չանտեսելու» խոստմանը, որը վերաբերում է նաև չճանաչված պետություններին, ՄԱԿ-ը և այլ միջազգային մարմիններ խուսափում են ԼՂ այցելելուց և տեղում իրավիճակին ծանոթանալուց: ԼՂ-ի վերջին պատերազմը վտանգավոր նախադեպ է ստեղծել՝ առաջացնելով ընկալում, որ ուժի օգտագործումը կարող է ընդունելի միջոց լինել էությունը քաղաքական հակամարտությունները լուծելու համար, և որ երկու առավել մեծ, ավելի հզոր ավտորիտար երկրների ռազմական հաղթանակը փոքր ժողովրդավարության նկատմամբ կարող է ընդունելի լինել:

Հայաստանում կարծիք կար, որ քանի որ Հայաստանը ավելի ժողովրդավար է, քան Ադրբեջանը, միջազգային հանրությունը, մասնավորապես, իրավապաշտպան կազմակերպությունները կաջակցեն Հայաստանին. այս հավատը վերացավ պատերազմի ընթացքում և դրանից հետո: Այն փոխարինվեց այն մտայնությամբ, որ նույնիսկ իրավապաշտպան մարմինները առաջնորդվում են աշխարհաքաղաքականությամբ և Realpolitik-ով:

Հայաստանում մեծ դժգոհություն կա, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության շրջանում, Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի ընթացքում միջազգային հանրության լռության պատճառով: Ներկայումս այդ հիասթափության պատճառով քաղաքացիական հասարակությունը դժվարանում է պաշտպանել Հայաստանում ժողովրդավարությունը և մարդու իրավունքների արժեքները: Քաղաքացիական հասարակությունը հետադիմական խմբերի կողմից թիրախավորվում է որպես ազգային անվտանգության սպառնալիք: Պետությունը պետք է անդրադառնա քաղաքացիական հասարակության խմբերի վրա հարձակումներին, որոնք նպաստում են ժողովրդավարությանն ու մարդու իրավունքներին՝ այդ գործընթացում քաղաքացիական հասարակության դերն ուժեղացնելու համար: Ժողովրդավարության պաշտպանությունն այժմ նույնքան կարևոր է, որքան ժողովրդավարության խթանումը:

Հայաստանում գործող իշխանությունները, որոնք իշխանության եկան ժողովրդավարական արժեքներ քարոզող հեղափոխության միջոցով, դանդաղ և անհետևողական էին համակարգը մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքներին համահունչ բարեփոխելու գործում, ինչը հասարակության մեջ հիասթափություն և վստահության կորուստ առաջացրեց: Ժողովրդավարական պետությունը նաև դրական պարտականություն ունի արդյունավետ հանրային հաղորդակցություն հաստատելու և տեղեկատվության անվտանգությունն ապահովելու՝ տեղեկատվական բացելը չթողնելու համար, որը լրացվում է ապատեղեկատվությամբ: Ժողովրդավարական բարեփոխումների հակառակորդներն օգտվում են այդ բացերից և այդ տարածքը լցնում ապատեղեկատվությամբ, կեղծ լուրերով, ատելության խոսքերով և կեղծ պատմություններով՝ դրանք դարձնելով ազգային անվտանգության խնդիր:

Անհատներին ապավինելու փոխարեն, իրական ժողովրդավարությանը անհրաժեշտ են ուժեղ համակարգային մեխանիզմներ՝ մարդու իրավունքների ու ժողովրդավարության պաշտպանությունն ապահովելու և ոչ ժողովրդավարական անցյալի ժառանգությունից հրաժարվելու նպատակով, ինչը պետք է ապահովեն պետական մարմինները՝ հիմնվելով քաղաքացիական կողմից ակտիվ մասնակցությամբ շահերի պաշտպանության և գործընթացման միջոցով քաղված դասերի վրա: Չսպումների ու հակակշիռների համակարգի բացակայությունը խեղաթյուրում է ինստիտուցիոնալ ժողովրդավարության զարգացումը և առաջացնում կառավարման ավելի ոչ ֆորմալ համակարգ՝ հիմնված իշխանության գերկենտրոնացման վրա:

Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը ոչ թե հակադրվում են, այլ լրացնում են անվտանգությանը, դրա հիմքն են և անհրաժեշտ են անվտանգության համար: Ժողովրդավարական բարեփոխումների ընթացքի պահպանումը և մարդու իրավունքների սկզբունքներին հավատարիմ մնալը հետպատերազմյան Հայաստանում նույնիսկ ավելի կարևոր է, քան նախկինում: